ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____2021 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» N 2209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

2. Որոշման 1-ին կետով սահմանված N1 հավելվածի առաջին սյունակի 7-րդ, 9-րդ և 10-րդ տողերում պաղեցրած բառը փոխարինել սառեցրած բառով։

3. Որոշման 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետում սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը բառերը փոխարինել հունիսի 20-ից 5 աշխատանքային օրվա ընթացքում բառերով։

4. Որոշման 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

16. Չբաշխված ներմուծման թույլատրելի ծավալը լիազոր մարմնի կողմից բաշխվում է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև՝ հավասարաչափ, սակայն յուրաքանչյուր մեկ մասնակցի մասով չպետք է գերազանցի չբաշխված ներմուծման թույլատրելի ծավալի 20 տոկոսը։։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։